ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հոկտեմբերի 2020 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ԱՐՓԻՆԵՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը և հաշվի առնելով «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի սեպտեմբերի 10-ի և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի հոկտեմբերի 2-ի №01/11.1/5472-2020 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող՝ ընկերության 16.122550647625374 տոկոս և վերջինիս մասնակից Գրիգոր Ալվարոյի Բաբախանյանին պատկանող ընկերության 83.02889405513119 տոկոս բաժնեմասից 33.02889405513119 տոկոսը ընկերության մյուս մասնակից Արմեն Ռաֆիկի Մուրադյանին օտարելուն, որի արդյունքում ընկերության բաժնեմասերը 50 տոկոս հարաբերակցությամբ հավասարապես բաշխվում են Գրիգոր Ալվարոյի Բաբախանյանի և Արմեն Ռաֆիկի Մուրադյանի միջև:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով տրված համաձայնությունը գործարքի կնքման համար վավեր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում:
3. «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքների կնքումից հետո երկշաբաթյա

ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել դրանց առնչվող փաստաթղթերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՐՓԻՆԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հոկտեմբերի 2020թ.